Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

«21» հոկտեմբերի 2024թ. N 21-Ա

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-24/14» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԳՈՌ ԱՎԱԳՅԱՆ» Ա/Ձ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության (Այսուհետև՝ ՔԿ ծառայություն) կարիքների համար 2024թ.-ի ընթացքում ընթացիկ շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման ձևով՝ 01.10.2024թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգ: Նշված գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել միայն «Գոռ Ավագյան» Ա/Ձ-ն:

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-24/14» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված էր 09.10.2024թ.-ին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Այսուհետև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն, եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունը. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում Մասնակից՝ «Գոռ Ավագյան» Ա/Ձ-ի Հավելված 2-ում՝ գնային առաջարկում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել՝ առաջարկելով մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով առկա անհամապատասխանության շտկման վերաբերյալ, սահմանված ժամկետում շտկումները չի կատարել, Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ

կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է: Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «Գոռ Ավագյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել այն:

Արդյունքում՝ «Գոռ Ավագյան» Ա/Ձ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի ա/ ենթակետով՝ «Գոռ Ավագյան» Ա/Ձ-ն պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ գնման ընթացակարգը իրականացվել է առանց հայտի ապահովման, ուստի հայտի ապահովման գումար չի կարող գանձվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 2-րդ մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Գոռ Ավագյան» Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ստորև ներկայացվում է համապատասխան տեղեկատվությունը աղյուսակի տեսքով:

Մասնակցի				Գնման ընթացակարգի ծածկագիրը
անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը	
«Գոռ Ավագյան» Ա/Ձ	23409287	Ք. Երևան, Այվազովսկու փ. 39տ.	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի ա/ ենթակետ. **Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը**	«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-24/14»

ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ